# Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 11-ի N 954-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

<u>**ՆԱԽԱԳԻԾ**</u>

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**

______ __________ 2020 թվականի N ______-Լ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-Ի N 954-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»**

Ղեկավարվելով Նորմատիվ իրավական ակտերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով և 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 11-ի «**Հայաստանի Հանրապետությունում** խոշոր եղջերավոր կենդանիների համարակալման և հաշվառման ծրագիրը հաստատելու մասին» N 954-Լ որոշման (այսուհետ՝ Որոշում) հավելվածի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

- Որոշման հավելվածի 6-րդ, 14-րդ, 25-րդ կետերի և 54-րդ կետի 4-րդ ենթակետում «հակաանասնահամաճարակային» բառը փոխարինել «անասնահամաճարակային» բառով»,
- Որոշման հավելվածի 16-րդ կետում «ընդհանուր» բառից հետո «վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների դեմ (բրուցելոզ, սիբիրախտ, դաբաղ և այլն)» բառերը փոխարինել «վարակիչ (բրուցելոզ, սիբիրախտ, դաբաղ և այլն) և ոչ վարակիչ հիվանդությունների դեմ» բառերով,
- Որոշման հավելվածի 33-րդ կետից հանել «(ՀՀ մարզի)» բառերը,
- Որոշման հավելվածի 36-րդ կետում «Ընդ որում, համարակալված և հաշվառված ԽԵԿ-ի մշտադիտարկման աշխատանքները

ժամանակագրական տեսանկյունից առավել արդյունավետ իրականացնելու նպատակով, ռադիոհաճախային պիտակ պարունակողականջապիտակը կամրացվի կենդանու աջ ականջին։»
նախադասությունը հանել։